

Հաստատված է՝

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

14.05.2021թ. № 10 նիստի որոշմամբ

ԲՊՀ-ի ռեկտոր, գիտական խորհրդի նախագահ՝

Կ. Վ. Հարությունյան



Կ Ա Ր Գ

**«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԲՊՀ) մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության կարգն ու պայմանները:

2. Սույն կարգը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրությանը, Կառավարության որոշումներին, ԲՊՀ-ի կանոնադրությանը, Կրթության և գիտության նախարարի՝ 06.12.2007թ. Հ 1193-Ն «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը հաստատելու մասին» հրամանին և իրավական այլ ակտերին:

II. ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3. ԲՊՀ-ի մագիստրոսի կրթական ծրագրով մրցութային կարգով կարող են ընդունվել ՀՀ պետական և ինստիտուցիոնալ հավատարմագրում ունեցող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ բուհ) առնվազն բակալավրի աստիճան ունեցող շրջանավարտները:

4. Մագիստրոսի կրթական ծրագրով օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը կատարվում է հարցազրույցի արդյունքների հիման վրա:

5. Ընդունելության առաջին փուլում պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման (անվճար) ուսուցմամբ ընդունելության մրցույթին կարող են մասնակցել ԲՊՀ-ի բակալավրիատի տվյալ մասնագիտության վերջին երեք տարվա

շրջանավարտները: Դիմորդների ընդունելությունը կատարվում է առանց ընդունելության քննության՝ հիմք ընդունելով միջին որակական գնահատականը (այսուհետ՝ ՄՈԳ):

6. Դիմորդների հավասար ՄՈԳ-ի առկայության դեպքում հաշվի են առնվում հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատանքների, թեզիսների և զեկուցումների առկայությունը:

7. Թափուր տեղեր առաջանալու պարագայում մրցույթին կարող են մասնակցել նաև ԲՊՀ-ի և ՀՀ պետական և պետական հավատարմագրում ունեցող ոչ պետական բուհերի՝ վերջին 3 տարվա և ավելի վաղ ավարտած շրջանավարտները:

8. Ընդունելության երկրորդ փուլում ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման հրավունքով (վճարովի) ուսուցմամբ ընդունելության մրցույթին կարող են մասնակցել ԲՊՀ-ի և ՀՀ պետական և պետական հավատարմագրում ունեցող ոչ պետական բուհերի շրջանավարտները:

9. Դիմորդների ընդունելությունը վճարովի ուսուցման համակարգում կատարվում է առանց ընդունելության քննությունների՝ մրցութային հիմունքներով՝ հիմքը ընդունելով ՄՈԳ-ը:

10. Բանակից զորացրված (ԲԶ) դիմորդների համար նախատեսված տեղերին կարող են հավակնել բակալավրի աստիճան ունեցող, ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած և վերջին երեք տարվա ընթացքում զորացրված դիմորդները: Ընդունելությունը կատարվում է առանց ընդունելության քննությունների՝ մրցութային հիմունքներով՝ հիմքը ընդունելով ՄՈԳ-ը: Դիմորդների հավասար ՄՈԳ-ի առկայության դեպքում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատանքների, թեզիսների և զեկուցումների առկայությունը:

11. Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը:

12. ԲՊՀ-ում միայն մագիստրոսի կրթական ծրագրով գործող մասնագիտության կրթական ծրագրերով (այսուհետ՝ ՄԿԾ) ընդունելությունը համապատասխան ֆակուլտետի խորհրդի որոշմամբ կարող է կատարվել քննության արդյունքների հիման վրա՝ մրցութային կարգով (ըստ ստացած գնահատականի):

13. Ընդունելության քննություն անցկացնելու նպատակով ԲՊՀ-ի ռեկտորի հրամանով ձևավորվում են առարկայական քննական հանձնաժողովներ, որոնց կազմում ներգրավվում են տվյալ ֆակուլտետի ղեկանը, համապատասխան ամբիոնի վարիչը կամ գիտաուսումնական կենտրոնի ղեկավարը և ընդունող հանձնաժողովի քարտուղարը:

14. Մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելությունը կազմակերպելու նպատակով ձևավորվում է ընդունող հանձնաժողով՝ ԲՊՀ-ի ռեկտորի նախագահությամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ԲՊՀ-ի ուսումնագիտական աշխատանքների հարցերով պրոռեկտորը, ուսումնական բաժնի պետը, ընդունող հանձնաժողովի քարտուղարը և ֆակուլտետների դեկանները:

15. Հանձնաժողովը ուսումնասիրում է մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության հայտերը, ամփոփում է քննությունների արդյունքները և եզրակացություն է տալիս դիմորդի ընդունելության վերաբերյալ:

16. Մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության փաստաթղթերն ընդունվում են ըստ սահմանված ժամանակացույցի:

17. Մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության համար դիմորդները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- 1) դիմում ԲՊՀ-ի ռեկտորի անունով,
- 2) բարձրագույն կրթության դիպլոմի և հավելվածի բնօրինակներն ու պատճենները,
- 3) 4 հատ լուսանկար (3x4 չափի),
- 4) զինվորական գրքույկի բնօրինակն ու պատճենը (առկայության դեպքում),
- 5) անձնագրի պատճենը,
- 6) ընդունելության ծառայությունների համար գանձվող 2000 ՀՀ դրամի վճարման անդորրագիրը:

18. Հեռակա ուսուցման ձևով մագիստրոսի կրթական ծրագրով կրթությունը կազմակերպվում է միայն վճարովի հիմունքներով՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

19. Հեռակա ուսուցման ձևով մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության փաստաթղթերն ընդունվում են՝ ըստ սահմանված ժամկետների:

20. Մագիստրոսի կրթական ծրագրով վճարովի համակարգ ընդունված դիմորդները պարտավոր են 15-օրյա ժամկետում վճարել ուսման վարձավճարը, որից հետո կատարվում է նրանց հրամանագրումը՝ ըստ մասնագիտությունների և մագիստրոսական կրթական ծրագրերի:

21. Տվյալ մագիստրոսական կրթական ծրագրով 5 դիմորդ չունենալու պարագայում այդ մագիստրոսական ծրագիրը չի իրականացվում, և դիմորդին առաջարկվում է մասնակցել մեկ այլ ՄԿԾ-ի մրցույթի: